առ Ճէզար և նա 'ի Կոստանդինուպօլիս ։ Հայք տուեալ էին նմա 300 քսակս արծաթոյ , նոյնպէս եւ Յոյնք , զոր հաստատեալ 'ի դատարանէ՝ ետուն նմա ։ Եւ Իսմայիլ Փաշա եկեալ պաշարեաց զքաղաքն Յոպպէ , և սկսաւ պատերազմիլ ընդ Մէհէմմէտ Փաշայի՝ որ որջացեալ կայր անդ , և 'ի նեղ արկեալ տագնապէր զտեսուչն Հայոց զՂազար վարդապետ , արկեալ զնա 'ի գանս և 'ի բանտս ։ Տեւեաց պատերազմն ընդ երկար՝ զի Իսմայիլ արտաքուստ և Մէհէմմէտ 'ի ներքուստ՝ որոտմունք հրանօթից դղրդէին ըզդաշտն Սարոնի ։

Մէհէմմէտ Փաշա կոչեալ զվարդապետս վանօրէից՝ երկիցս և երիցս՝ պահանջէր 'ի նոցանէ դրամ, և 'ի բաց առեալ նոցա , հարկանէր ուսամբ և կամ կացնիւ՝ որ 'ի ձեռին իւրում, և սպառնայր ժողովրդոց մատնել 'ի մահ , և այսպիսի եղանակաւ էառ 'ի Ղազար վարդապետէ 120 քսակս, թող զայլս ․ քայքայեալ աւերեցան շինուածք վանից եւ կալուածոց , զի այժմեան բնութիւնն առաւել եղեւ քան զՓապլիացւոցն , զի յայնժամ վաճառեցին զոսկի , զարծաթ և զպղինձ , և զծանրութիւն հարկացն բարձին ․ իսկ այժմ մերկացեալ յամենայնէ՝ ոչ ինչ գտանին հատուցանել նոցա ։ Եւ յաւուրս յայսոսիկ եւ համբաւ լինել կուսակալ Դամասկոսի և Երուսաղէմի Ապտուլլահ Փաշայի , որոյ վասն հըրամանաւ Ճէզար Փաշայի առին զսահմանեալ տարեկան տուրսն՝ զորս կոչէին Ռուգօրտիյէհ և Սանճագիյէ , և ապա պահանջէին 50 քսակ եւս Իսթրաճիյէ ։ Նեղեալ յայսպիսի տառապանաց Թէոդորոս Պատրիարքի վշտագին սրտիւ գրեաց առ ազգայինս Կոստանդինուպօլսոյ ձեռն կարկառել և թեթեւացուցանել զծանրութիւն բեռին ։

Միաբանք Հայոց 'ի տաճարին Ս․ Յարութեան , 'ի պատարագելն յիւղաբերից սեղանն , զլուացարանն դնէին առաջի Խաչելութեան պատկերի , եւ լուսարարն Լատինաց յանդգնութեամբ համարձակեցաւ բառնալ զայն անտի ․ 'ի ծանուցանել Թէոդորոսի Փոխանորդի նոցին , նա ազդարար 'ի ձեռն ոմանց չդնել զայն 'ի նոյն տեղի ․ և ընդդիմանալն Հայոց , ահացուցին զնոսա երկեցուցիչ բանիւք լինել անհնարին ․ ապա 'ի խորհրդեան սահմանեալ են գըրել 'ի Կոստանդինուպօլիս և յայլ տեղիս , թէ Հայք ըլ-